

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՈՒՆ

ՅՈՎՍԵՓԱՅ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ԱՐՂՈՒԹԵԱՆՅ

ՎԱՍՆ

ՀՈԳԵԻՈՐ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԱԽԻՋԵԻԱՆԻ.

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԳ,

Վասն կառավարութեան հասարակ եկեղեցեացն :

Ա.

Գրեմք վասն եկեղեցեացն, զի զամենայն եկեղեցիսն միասիրտ, միապես եւ միով աջօք հայելով պաշտեսցեն ժողովորդքն, առանց մեր եւ ձեր ասելոյ. զի լիցի սեր եւ միարանութիւն հասարակութեանն, ընդ որ հաճի Աստուած. զի ամենայն եկեղեցիքն եւս են տուն Աստուծոյ եւ տաճար փառաց ամենակալին. եւ մեծապէս մեղանշէ որ բաժանէ զնոսս իւրտի իւրում, զմիոյն պայծառութիւն կամելով եւ զմիւսոյն ոչ :

Բ.

Սրբազան Արքեպիսկոպոսն եւ կամ Հոգեւոր Գառաւրանն՝ Երկու եւ երեք իշխանաց վկայութեամբ կարգեսցն երիցփոխ զարս հաւատարիմս իւրաքանչիւր եկեղեցեաց յատուկ յատուկ, եւ զեկեղեցեաց անօրսն դարբարս. յանձնեսցն նոցա, եւ երիցփոխքն պնդապէս եւ յաւագոյն պաշտպանութեամբ պանեսցն զամենայն անօրսն արծարեղենս եւ շորեղենս, որ եւ ըստ ժամանակին հաշիւ տայցն Հոգեւոր Գառաւրանին :

Գ.

Գործ երիցփոխանացն է ջանալ արդիւնաւորել զեկեղեցին իմոմէ, իխնկէ, զոր պարտ է ինքն հոգալ արդեամբ եկեղեցւոյն եւ ծախել. իզանձանակէ, իմկրտութենէ, ի պսակէ եւ իննջեցելոց եւ յայլոց : Բայց համեստութեամբ վարեսցին ընդ ժողովրդեանն վասն արդեանցն, եւ ըստ կարողութեանն պահանջեսցն, իմկրտութենէ, եւ իպսակէ : Իմկրտութենէն տասն կոպէկ առ հասարակ, իսկ ունեւորքն

առաւել. իպսակէ քսան կոպէկ առ հասարակ, իսկ ունեւորքն առաւել. ինեւելոց՝ երէ կտակ եւ խոստմունք առնիցի՝ այն է. իսկ երէ ոչ ունիցի, յորժամ ննջեցեալն իյեկեղեցի տանիցեն, առ հասարակ քսան կոպէկ տացեն, բայց ունեւորքն եւս առաւել :

Դ.

Մի բողոցուն երիցփոխանքն քահանայից՝ ձեռնամուխ լինել իմոմս եւ իխունկս եկեղեցւոյ. բայց պատարագողացն ըստ բաձականին տացեն վասն սաղմոսելոյ եւ այլ աղօրից :

Ե.

Քահանակ եկեղեցւոյն շրջեսցի իշարարու պատարագին, իկիրակամտին, եւ իկիրակի պատարագին, եւ յայլ հանդիսաւոր տունս :

Զ.

Քահանակք որք պարտին լինել իյեկեղեցիսն՝ այտօքիկ են. 1, Սուրբ Աբրուայն Էջմիածնի : 2, Սուրբ Երուսաղէմայն : 3, Վանիցն : 4, Կարապետին : 5, Նոյնոյ եկեղեցւոյն : 6, Սանկր-Պետրապօլսոս սուրբ Կատարինէ եկեղեցւոյն մերոյ՝ վասն մեծագունեղ բարերարութեանց եւ երախտեաց անդ եղեալ իշխանացն մերոց Ազնիւ Աղայ Յովհաննէսին Եղիազարեան, զոր արար եւ միշտ առնէ հասարակութեան մերում. եւ ինմին եղեալ իշխանքն միշտ պիտոյ են մեզ եւ հասարակութեան մերոյ. ուստի եւ մերս հասարակութիւնն՝ նոցին հասարակութեանն պարտի օգնութիւն առնել, որ է սուրբ եկեղեցին Կատարինեայ. զի իներկայս յոյժ սակաւաւորք են ազգ մեր անդ : Յետ այնորիկ 7, Աղբատաց. 8, Քահանայիցն : Այսու կարգաւ եւ զանձանակքն գնացցն :

Է.

Սուրբ Էջմիածնայ զանձանակն շրջեսցի իկիրակամտին եւ իկիրակի պատարագին : Սուրբ Երուսաղէմայն իկիրակէին առաւօտեան ժամու իւղարերից Աւետարանին. զի

այս բնական կարգն է նոցա : իշարար եւ իկիրակէին՝ Վանիցն եւ Առաջնորդարանինն : Սուրբ Կատարինէ եկեղեցւոյն Պետրպօլսքու , եւ նոյնոյ եկեղեցւոյն զանձանակսն իկիրակէին : Իսկ քահանայիցն յամենայն առուր յորում պատարագ լինի : Իսկ իհանդիսաւոր առուրքն Յայտնութեան եւ Մկրտութեան՝ ամենայն զանձանակքն զկնի միմիանց :

Ը .

Ամենայն զանձապետք եւ երիցփոխք սահմանեսցեն յիւրաքանչիւր եկեղեցւոջ աման ինչ , եւ կնքեսցեն զայն վասն զանձանակաց իւրեանց որք շրջին իկիրակեսն եւ յայլ նշանակեալ առուրսն . զորս ժողովեալ անդ արկցնն , եւ իղիպօղ ժամանակի առեալ զարդիւնսն՝ դավճ զրեալ արկցնն յաման անդր վասն տարելից նաշուատրութեանն :

Թ .

Ամենայն հաւատով ննջեցեալ՝ յորժամ կամիցի կտակ զրել եւ կամ խոստմունս առնել վասն հոգւոյ իւրոյ , պարտի իխոստման եւ իկտակի իւրում հարկաւոր իմանալ զՍուրբ Արթուրն Էջմիածին . զիւր վանքն եւ Առաջնորդարանն յիշել՝ ըստ խոստմանն եւ կտակին . բայց Սրբոյ Արթուրն բաժինն կրկին չափով : Այս հարկ եւ պարտաւորութիւն է ինքեան կտակարարին : Ընդ նմին յիշել եւ զաղքատս : Իսկ այլքն ամենայն ոչ են իհարկաւորութեան . այլ երէ ջերմեռանդ ոք իցէ , կամիցի եւ սուրբ Երուսաղէմայ , սուրբ Կարապետին , իւր իսկ եկեղեցւոյն , եւ այլոց վանօրէից եւ եկեղեցեաց եւս մասն հանել , յոյժ բարի առնէ . այն ողորմութիւն է եւ ոչ հարկ :

Ժ .

Ամենայն հաւատով վախճանեալ քրիստոնէի ընտանիքն , երէ հայր իցէ , երէ որդի եւ կամ այլ ինչ բարեկամ , որք ժառանգողք են ընչից մեռելոյն , յորժամ ննջեցեալն ոչ ունիցի կտակ եւ խոստմունք՝ նոքա պարտին իկալից հանգուցելոյն մասն հանել սրբոյ Արթուրն , զոր հոգւոյ բաժին կոչեմք : Վասն որոյ՝ քէ այլոց վանօրէից եւ եկեղեցեաց տան եւ քէ ոչ , սրբոյ Արթուրն հարկաւոր է , ըստ որում է ծնող հոգեւոր եւ զլուխ ամենայն եկեղեցեաց . զի եւ միաբանք նորին վայելեալ , աղօթեսցնն զցայգ եւ զցերեկ վասն հոգւոց նոցին փրկութեան : Եւ զկնի սրբոյ Արթուրն հարկ է եւ տեղւոյս Վանիցն եւ Առաջնորդին : Բայց յանկարծամահից եւ յանհաղորդից , առաւել պարտին մասն հանել ըստ կանոնաց՝ ըստ տեղւոյն եւ ըստ կարողութեանն :

ԺԱ .

Ամենայն քրիստոնեայ իժամ բարի մահուան իւրում երէ կտակ զրեսցէ ինքեան , երկուք եւ երեք վկայիւք . եւ ղիցի այնպէս : Բայց Սրբոյ Արթուրն բաժինն քան զայլոցն

պարտի առաւելապատիկ լինել , որպէս իվերն զրեցի քէ ըստ որում է մեզ ծնող եւ տեղի պարծանաց . եւ պարտաւորութիւնն խոստովանանայր քահանային է , որ քաղցրութեամբ յորդորեսցէ զխոստովանողին իւր՝ յուշ առնելով նմա զերախտիսն Սրբոյ Արթուրն Էջմիածնի , եւ գնորին կտակն ըստ կարողութեան կտակարարին առաւելույ :

ԺԲ .

Երէ պատանեսցի իքաղաքի ոք որ իցէ պանդուխտ , օտարական կամ մշակ , կամ գերի , կամ աղքատ , կամ ժողովաւորարար , քէ եկեղեցական եւ քէ աշխարհական , վարդապետ կամ քահանայ , կամ հասարակ ժողովուրդ՝ այր կամ կին , որ երէ առանց կտակի մեռանիցի , նոցին մնացեալ ինչքն՝ կանոնական հրամանաւ՝ Սրբոյ Արթուրն Էջմիածնի է եւ ոչ ումեք . ոչ Առաջնորդին է եւ ոչ վանիցն : Վասն որոյ Հոգեւոր Դատարանի մերոյ եղեալ զատաւորքն պարտին գնալ , զրել եւ տիրել , ընդ միոյ զատաւորին մագիստրաբի : Բայց երէ ունիցի պարտք , հասուցեն , եւ զբաղման կարգն ըստ արժանւոյն եւ ըստ կային հոգացեն . եւ զմնացեալն դաւարաւ պահեսցեն ընդ այլ արդեանց Սրբոյ Արթուրն : (Յետոյ նշանակեալ է այսպէս . երեք բաժին եղիցի . Արթուրն , Վանքին տեղւոյս , եւ աղքատացն քաղաքիս) :

ԺԳ .

Երէ պատանեսցի այնպիսի մեռանող ոք՝ տնաւոր եւ կամ դարիպ վաճառական , որ անյիշատակ լինիցի , եւ զկնի մահուան իւրոյ՝ իւր կայիցն տիրող չլինիցի , երէ կտակ զրեսցէ , եւ իւր կայքն ինքնին բաժանեսցէ Սրբոյ Արթուրն եւ այլ վանօրէից եւ եկեղեցեաց , եւ աղքատաց եւ քահանայից , եղիցի այնպէս : Իսկ երէ կտակ չունիցի , եւ ոչ յիշատակ ժառանգող ընչից իւրոց , Հոգեւոր Դատարանի մերոյ զատաւորքն պարտին ընդ միոյ զատաւորի մագիստրատի գնալ եւ զրել զամենայն ինչս հանգուցելոյն՝ զշարժունն եւ զանշարժունն , զնաղոն եւ զվեճն եւ զվեճեղեն եւս ծախել . երէ պարտք ունիցի՝ հատուցանել , եւ հոգալ զնա իբաղումն եւ իքահանայսն ըստ կարողութեան վախճանելոյն . եւ զմնացեալն , զոր օրինակ երէ լինիցի հինգ րուպլի , երկու րուպլի Սուրբ Արթուրն Էջմիածնի տալ , մեկ րուպլի վանիցն , մեկ րուպլի Առաջնորդին , եւ մեկ րուպլի աղքատացն . այս օրէն յաւիտենական եղիցի :

ԺԴ .

Իսկ երէ այսպիսի հանգուցելոյս կայրն պատշաճ լինիցի սալ մերձաւորի իւրում , որ երէ ունիցի , յայնժամ զտասանորդն առցեն եւ ըստ վերոյ կարգին բաժանեսցեն . սուրբ Արթուրն , Վանքին , Առաջնորդին , եւ աղքատացն ,

զիտուրեամբ հոգեւոր եւ մարմնաւոր դատաւորաց . եւ զգիր ըստ յիշատակաց պահեսցեն վասն ապագային :

ԺԵ .

Եւ երբ լինիցին , զոր օրինակ , երկու եղբարք բաժանեալ ընչիւք , մինն մեռանիցի անյիշատակ եւ միւսն տիրել կամիցի ընչից եղբորն իւրոյ , ըստ վերոյ օրինակին ' տասանորդս հանցեն ինմանէ , եւ բաժանեսցեն սուրբ Աբողոյն , Վանքին , եւ Առաջնորդին , եւ աղքատացն , ըստ օրինակին վերնոյ : Այնպէս եւ այլ մերձաւորաց արասցեն :

ԺԶ .

Երբ այնպիսի դարիպ ոք մեռանիցի , որ յիւրում երկրումն ժառանգ ' այսինքն վարիս ունիցի , եւ տեղս իմեռանելն չիցէ կարգեալ զօք վէքիլ եւ հոգարարձու ինքեան , եւ նորին ամենայն կայքն զրեսցեն հոգեւոր եւ մարմնաւոր դատաւորքն ' քէ նաղղ եւ քէ վէճ , եւ իզալ ժառանգացըն մեռելոյն ' յայտնեսցեն Սրբազան Արքեպիսկոպոսին վիճակի ' երբ իցէ յայլ քաղաքի . որպէս եւ նա զրեսցէ , արասցեն այնպէս . զի յայսմանէ եւս պարտի տասանորդ հանել վասն հոգւոյ իւրոյ ըստ վերոյ սահմանի :

ԺԷ .

Ապա երբ ազահուրիւն ինչ արարեալ ժողովուրդքն կամ քահանայքն , կամ հոգեւոր եւ մարմնաւոր դատաւորքն վասն կայից այնպէս մեռանողին , եւ տացեն նմա խոստովանիլ եւ կտակ ոչ զրել , որպէս քէ կայքն նորին յափշտակելով . եւ կամ քէ ոք վասն ազահուրեան այն մեռանողին վէքիլ լինիցի ստուրեամբ , եւ կամ յետ մահու նորա ազահուրիւն արասցէ վասն կայից մեռանողին , յամենայն կողմանէ նզովեալ եղիցի , յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա . զի ազահեաց զինչս մեռելոյն . եւ յեպիսկոպոսէն նզովս բանաղրանաց ընկայցի ըստ ժամանակին ' մինչեւ զղջացեալ խոստովանեսցի :

ԺԸ .

Ննջեցեալն որ եկեղեցին որ տանիցեն , եւ զբաղման կարգն ինմա կատարեսցեն , զիազարդն ' որ է երեսքարշիկն , երբ ունիցի ' նոյն եկեղեցւոյն լինիցի , եւ զնոյնն զզեստ եկեղեցւոյ արասցեն : Իսկ երբ իյեկեղեցին ոչ տանիցեն , եւ զբաղման կարգն իյեկեղեցւոջ ոչ կատարեսցեն , երբ ունիցի զիազարդ ' Սուրբ Աբողոյն է , որպէս իշաշտարխան եւ իՂզլար : Բայց երբ ոք կամիցի իւրոյ մեռելոյ զիազարդն իՎանքն տալ , եղիցի ըստ իւր յօժարութեանն :

ԺԹ .

Ամենայն երիցփոխի հաշիւն տեսցեն իլրման տարւոյն հոգեւոր դատաւորքն մեր հանդերձ երկու իշխանօք եկեղեցւոյն այնմիկ , եւ փոխանակ նորին զնորն ընտրեալ

կացուցեն , զամենայն ծախսն եւ զմուտսն նորին իդարարս եկեղեցւոյն զրեալ , նոյն դարարն եւ զբամն աւելեալ զնիցեն իմիւում սնդղոջ եւ պահպանեսցեն իխորանոջ եկեղեցւոյն , ուր զզեստատունն է : Հին երիցփոխն կնքեսցէ , եւ բանալին նոր երիցփոխին տացէ , եւ յորժամ պիտոյասցի եկեղեցւոյն , զիտուրեամբ Հոգեւոր Գատարանին բացեալ առցեն զոր ինչ եւ կամին ըստ պիտոյիցն , եւ ինքեանք բարց դատարանի զիտուրեանն մի իշխեսցեն ձեռնամխիլ :

Ի .

Յորժամ աղքատաց բապախն ոչ բաւականացի աղքատացն , եւ եկեղեցին ունիցի բաւական դրամս , հարկ է Սրբազան Արքեպիսկոպոսին վերահասու լինել եւ տեսանել , եւ ըստ պիտոյից աղքատաց , տնանկաց , զերեաց , հիւանդաց , եւ անտէր ննջեցելոց օգնութիւն առնել . զի եւ նոքա Աստուծոյ են եւ որդիք սուրբ եկեղեցւոյն :

ԻԱ .

Ով ոք եւ լինիցի հասարակ աղքատաց գանձապետ , հարկ է եւ նմա իլրանալ տարւոյն ' զհաշիւն իւր տալ հոգեւոր եւ մարմնաւոր դատաւորացն , եւ զինչս աղքատացն պնդութեամբ պահել իրրեւ զինչս Աստուծոյ , եւ մի անընտրութեամբ տալ աշխարհականաց վասն շահեցուցանելոյ , որում ոչ վկայեսցեն հոգեւոր եւ մարմնաւոր դատաւորքն : Սյլ եւ երբ լինիցի եւս տալ , մեծազգուշութեամբ , բազում վկայիւք , զրով եւ երաշխաւորաստայցեն , զի մի իզուր կորուսցեն : Եւ երբ ինքնազուխ տացէ գանձապետն ուրուք զղրամս աղքատաց , առանց հարցանելոյ հոգեւոր եւ մարմնաւոր դատաւորաց , մինչ վնասեսցի տուեալն այն , յանձնէ իւրմէ տուժեսցի վասն անստղութեանն :

ԻԲ .

Վասն կառավարութեան եւ գործածութեան գանձանակացն եւ ընչիցն աղքատաց ' բազումս ունի հարկաւորութիւն զրել կանոնս ' սակայն իներկայս եւ ոչ միոյն կարողանամք վերահասու լինել եւ ըստ այնմ սահմանել , մինչ տուրքն նուազ է վասն տառապանաց նորաշէն քաղաքի , եւ աղքատք բազումք : Մինչ Աստուծոյ ողորմութեամբն քաղաքս հաստատութիւն ընկայցի , եւ աղքատքն սրափեսցին իյողորմելութեանէ , եւ տուրքն բազմացցի , իժամանակին յայնմիկ եղեալ Արքեպիսկոպոսն որ տեսուչն է հոգւոց եւ մարմնոց նոցա , տեսցէ հոգեւոր եւ մարմնաւոր դատաւորօք եւ իշխանօք , եւ ըստ այնմ կարգս եւ սահմանս զիցէ , քէ իյորս գործածել պարտին . Յրբ եւ որով ճանապարհաւ , որ լինիցի զիւրութիւն աղքատաց եւ բարեկարգութիւն քաղաքին : Չոր օրինակ երբ բազմացի զրամն , կարող են նովաւ զհիւանդանոցս շի-

նել, եւ զամենայն անգործ աղքատս եւ զորքս ինձա ժողովել, եւ ըստ այնմ վերակացուս կարգել:

ԻԳ.

Իման սմին հարկաւորի ինձ գրել եւ կանոնս ոմանս վասն կառավարութեան համալսարանին, այսինքն վարժարանին, որ է զպրատուն. բայց մինչ այժմ ոչ գոյ այն. երբ Աստուծոյ տորմոթիւնն քաղցրացուցէ զսիրտ Կայսերական Մեծութեանն, որ վասն այնորիկ եւ ոռճիկս սահմանեացեն, յայնժամ երէ եղէց կենդանի, ըստ կարգի եւ ըստ պարտաւորութեան մերոյ՝ սահմանելոց եմ զամենայն, վասն բարւոք կառավարութեան նորին եւ հաստատութեան, եւ իւրաքանչիւրոց զործն, վարժապետին եւ վարժելոցն յատկացուցանելոց, յորոց պարտին յառաջ գալ այսուհետեւ բոլոր եկեղեցականքն: Իսկ երէ հանդիպի մեզ մահ՝ ըստ հոսանուտ բնութեանս մարդկան, եւ կամ լինել այլ ուրեք՝ ըստ փոփոխ բնութեանս մերոյ, յայնժամ հարկ եւ պարտաւորութիւն է այնմ Սրբազան Արքեպիսկոպոսին որ զկնի մեր յաջորդէ, որ զվերոյնշանակեալսն լրացուցէ, եւ հոգս կատարեալս տարցէ իւրոյս ածել զամենայն անկատար եւ խաւար հոգիսն, իւրոյս զիտութեան,

որով փառաւորի Աստուած, պայծառապէս պանծայ Սուրբ Արքուն մեր եւ եկեղեցիքն, բարեկարգի հոգեւոր եւ մարմնաւոր դատարանքն, եւ ժողովուրդքն ժամանակին լինին երանելիք, որք տեսանեն զօրդիս իւրեանց յառաջագինս գնալոյ զօրութենէ իզօրութիւն, զանկութենէ իյազնուականութիւն. որ չիք իր ինչ պատուականագոյն իյաշխարհի քան զիմաստութիւնն, որպէս յայտ առնէ Սողոմոն. եւ Դաւիթ անյաղք փիլիսոփայն մեր, եւ հնագոյն հեղինակքն իմաստութեամբ, եւ ներկայիս փորձն, որ մեծամեծ բազաւորք իմաստութեամբ յայնացուցանեն զհայրենիս, ստանան զանուն մշտնջենական, եւ բողոքն զերջանկութիւն ստորադրելոցն: Հակառակ սմին, որք զուրկք են իմաստութենէ, զունեցեալ իշխանութիւնն կորուսին եւ կորուսանեն: Եւ նոյն ինքն Սրբազան Արքեպիսկոպոսն որ զայս տնօրինէ, լինի պարտաւոր բիւր բարեաց ժողովրդեանն, որպէս նախնի բարգմանիչքն ազգիս մերոյ, զորոց վիպէ պատմաբանն Մովսէս քերթողն Խորենացի:

Նուառտ Յովսէփ Արքեպիսկոպոս Ռուսաց երկրի ամենայն Հայոց ազգին, եւ Հիմնադիր նորաշէն քաղաքիս Նախիչևանայ:

Ա Ռ Ա Կ.

ԱՔԱՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ.

*Աքաղաղին մէկն աղբիւսը քրքրած ատեն  
Ինչպէս եղաւ՝ մարգարիտ մը գըտաւ մէջէն.*

*Դառնայ ինչ ըսէ աղէկ.  
« Հը՛, ինչ փուճ բան, նայեցէք.*

*Մարգիկ սրբան անխելք են  
Որ սըւոր մեծ գին կը գընեն:*

*Ինծի համար, կուզէք ըսեմ՝ ճըշմարիտը.*

*Հատ մը գարին լաւ է քան զայս մարգարիտը:*

*Իրաւ, գարին տեսօք չէ,  
Բայց փոր կը կը շտայցընէ »:*

*Ահա այնպէս է ընդհանուր*

*Տըգէտ մարգոյր գատաստան.*

*Ա՛ր բանէն որ համ՝ չեն առնուր՝*

*Իրենց համար է անպիտան:*

ԳՌԻՆՈՎ.